ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7309-2019 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/437-2019 գրության հիման վրա, 03.05.2019թ. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/437-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգում «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն և «ԱՐՄՖԱՐՄ» ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ գնահատող հանձնաժողովի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել են 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ: «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և «Արմֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ հրավերով պահանջ-վող որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններս հայտարարվել են ընտրված /հաղթող/ մասնակիցներ 3-րդ չափաբաժնի մասով: Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ծանուցվել է «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/, սակայն վերջիններս, որպես ընտրված մասնակիցներ հրաժարվել են պայմանագիր կնքելուց:

Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետը՝ որոշեց «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և «Արմֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ հայտը մերժել:»:

3. <u>«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.05.2019թ. գրությամբ դիմել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7309-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ. *«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ չի ստացել պայմանագիր կնքելու առաջարկ պատվիրատուից՝ գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված ժամանակահատվածում, ինչի հետևանքով էլ այն չի կնքվել:*

Սույն փաստը հաստատվում է նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.04.2019թ. գրությունով՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուշ է ուղարկվել: Ի դեպ, տեղեկացնում ենք, որ ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված 4 աշխատանքային օրվա փոխարեն ուշացումը կազմել է 35 օր:

Ուզում ենք նշել, որ Eauction համակարգի /էլեկտրոնային աճուրդ/ խափանման ժամանակահատվածում էլեկտրոնային փոստի միջոցով տարբեր պատվիրատուների կողմից ստանալով և կնքելով բազմաթիվ պայմանագրեր, չենք էլ պատկերացրել, որ ավելի քան մեկ ամիս անց առաջարկվելու է կնքել պայմանագրեր:

*Ներկայացնում եմ նաև տեղեկանք «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից, որ համաձայն մեր կազմակերպությունների միջև 2018թ-ի դեկտեմբերին ձեռքբերված պայմանավորվածությունը ամրագրելու Բինտ ստերիլ 7*14, 60000 հատ քանակությամբ 2019թ-ին Ձեզ մատակարարելու համար, 2019թ-ի հունվար-փետրվար ամիսներին եղած քննարկումների արդյունքում Ձեր կողմից որպես ամրագրումը վերջնաժամկետ է նշվել 2019թ-ի փետրվարի 19-ը: Սակայն Ձեր կողմից նշված վերջնաժամկետը 2019թ-ի փետրվարի 19-ը լրանալուց հետո, չստանալով ոչ մի հստակ տեղեկատվություն գնելու եք արդյոք այդ ապրանքը, թե ոչ, ստիպված ենք եղել ս.թ. մարտի 15-ին Ձեր կազմակերպության համար ամրագրված 60000 հատ քանակությամբ Բինտ ստերիլ 7*14 ապրանքը հանել ամրագրումից:»:*

Հաշվի առնելով վերոնշյալ փաստը, Բողոքներ քննող անձին խնդրել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.01.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 01.02.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Նույն արձանագրության համաձայն, որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված /հաղթող/ մասնակիցներին:

www.gnumner.am կայում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/: Սահմանվել է անգործության 10 օրացույցային օր ժամկետ /04.02.2019թ-ից մինչև 14.02.2019թ-ը/:

Հանձնաժողովի 18.04.2019թ. թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում հրաժարվել է կնքել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը:

Հանձնաժոովի կողմից 22.04.2019թ. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ ուղարկվել է ծանուցում այն մասին, որ «*կազմակերպության 16.04.2019թ. 1604/1 գրության վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Eauction համակարգի /էլեկտրոնային աճուրդ/ խուսիանմսսն արդյունքում, գնմանը ընթացակարգի շրջանակներում իրականացվող ամբողջ աշխատանքը կատարվել է ձեռքով, ինչի հետևանքով պայմանագիր կնքելու մասին*

ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուշ է ուղարկվել: Ծանուցված լինելով 21.03.2019թ. պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին գնահատող հանձնաժողովին տեղեկացրել եք միայն 16.04.2019թ-ին, այն ինչ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նուսխագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է պայմանագիրը Ձեր կողմից ստորագրվեր /Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ ենթակետի/: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Eauction համակարգի /էլեկտրոնային ուսճուրդ /խափանման փաստը (ինչի մասին տեղեկացված եք եղել նաև դուք) Ձեր կողմից' պաայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուշ ստանալու պատճառաբանությամբ պայմանագիր կնքելուց հրաժարվելը հիմնավորված չէ:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7309-2019 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև ընտրված /հաղթող/ մասնակից:

Հանձնաժողովը www.gnumner.am կայում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով անգործության 10 օրացույցային օր ժամկետ /04.02.2019թ-ից մինչև 14.02.2019թ-ը/ և որոշել է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված /հաղթող/ մասնակիցներին:

Հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 21.03.2019թ.՝ սահմանված ժամկետից ուշ, ինչով պայմանավորված «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն հրաժարվել է կնքել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրաժարվելով պայմանագիր կնքելուց, թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Պատվիրատուն անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում չծանուցելով ընտրված մասնակցին՝ հենց ինքն է, նախ և առաջ, թույլ տվել Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջների խախտում, որպիսի խախտման պարագայում, արդեն իսկ մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելը, չի կարող հանգեցնել տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.05.2019թ. թիվ 26/26-1/7309-2019 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**